Հաստատված է

«Խ. Աբովյանի անվան
հայկական պետական մանկավարժական
համալսարան» ՊՈԱԿ ռեկտորի
03.04.2012 թվականի թիվ 2-367
հրամանով
Ընդունված է ՀՊՄՀ գիտական խորհրդի
14.03.2012 թվականի թիվ 7
նիստում
Նախագահ՝ Հ. Հովհաննիսյան

«ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Երևան 2012

Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՌԵԿՏՈՐ

Թիվ _____ _____._____.2012թ.

Հ Ր Ա Մ Ա Ն

,Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԵ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆԵ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2002 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ 1813-Ն որոշմամբ հաստատված ,Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանե պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Համալսարան) կանոնադրության 29-րդ կետի ժգ) ենթակետով, Համալսարանի 2005 թվականի նոյեմբերի 29-ի նիստում հաստատված ,Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական խորհրդիե կանոնակարգի 4.3-րդ կետի ե) ենթակետով և հիմք ընդունելով Համալսարանի գիտական խորհրդի 2012 թվականի մարտի 14-ի թիվ 7 որոշումը՝

1. Հաստատել սույն հրամանին կից ներկայացված ,Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանե պետական ոչ առևտրային կազմակերպության պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորմանե կանոնակարգը համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ռուբեն Միրզախանյան

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգով սահմանվում է ,Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանե պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Համալսարան) պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կարգը:
2. Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի և Համալսարանի միջև աշխատանքային հարաբերություններն իրականացվում են պայմանագրային հիմունքներով, որին նախորդում է պաշտոնները զբաղեցնողների մրցութային կարգով ընտրությունը (բացառությամբ մանկավարժական հատուկ տարակարգեր զբաղեցնելու դեպքերի):

II. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ՏԱՐԱԿԱՐԳԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

3. Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմն ընդգրկում է հետևյալ տարակարգերը՝ դասախոս, ասիստենտ, դոցենտ, պրոֆեսոր:
4. Ըստ պրոֆեսորադասախոսական կազմի տարակարգերի՝ սահմանվում են ուսումնական, հետազոտական և մեթոդական-կազմակերպչական գործունեության հետևյալ ցուցանիշները.

4.1. Պրոֆեսոր՝

1) դասախոսությունների անցկացում (հիմնականում՝ մագիստրատուրայում և ասպիրանտուրայում),
2) գիտամեթոդական սեմինարների անցկացում, մագիստրանտների և ասպիրանտների ատենախոսությունների ղեկավարում,
3) մագիստրոսական և ասպիրանտական ծրագրերով նախատեսված նոր մասնագիտությունների ու դասընթացների ստեղծում և կազմակերպում,
4) գիտական և ուսումնամեթոդական աշխատանքների, մասնավորապես, գիտական մենագրությունների և ուսումնական ձեռնարկների հրատարակում, այդ թվում՝ ատենախոսության (թեկնածուական, դոկտորական) պաշտպանությունից հետո,
5) զեկուցումներ հանրապետական և միջազգային գիտաժողովներում,
6) ամբիոնում հետազոտական ծրագրի, խմբի, լաբորատորիայի հիմնում և ղեկավարում,
7) մասնակցություն համալսարանական և արտասահմանյան գիտակազմակերպչական, գիտամեթոդական, փորձագիտական, ինչպես նաև գիտական աստիճաններ շնորհող խորհուրդների, հանձնախմբերի, հանրապետական և միջազգային գիտատեխնիկական միությունների, ընկերակցությունների և այլ մարմինների աշխատանքներին,
8) խորհրդատվական գործունեություն,
9) գիտության տվյալ բնագավառում ստացած արդյունքների բավարար ճանաչվածության հանրապետությունում և նրա սահմաններից դուրս:

4.2. Դոցենտ՝

1) դասախոսությունների անցկացում (բակալավրիատում, մագիստրատուրայում և ասպիրանտուրայում),
2) գիտամեթոդական սեմինարների անցկացում,
3) բակալավրի ծրագրով ուսումնառուների ավարտական (դիպլոմային) աշխատանքների, մագիստրոսների և ասպիրանտների ատենախոսությունների ղեկավարում,
4) թեկնածուական ատենախոսության պաշտպանությունից հետո գիտական և ուսումնամեթոդական աշխատանքների հրատարակում,
5) հետազոտական աշխատանքների կազմակերպում և իրականացում,
6) զեկուցումներ հանրապետական և միջազգային գիտաժողովներում,
7) մասնակցություն ծրագրային, մեթոդական և մշտական հանձնախմբերի, խորհուրդների, որակավորման և գիտական աստիճաններ շնորհող մարմինների, փորձագիտական և խորհրդատվական հանձնախմբերի աշխատանքներին:

4.3. Ասիստենտ՝

1) դասախոսությունների, գործնական և լաբորատոր պարապմունքների անցկացում (հիմնականում՝ բակալավրիատում),
2) ուսանողների հետ կանոնավոր խորհրդատվությունների անցկացում,
3) բակալավրի կրթական ծրագրով ավարտական (դիպլոմային) աշխատանքների ղեկավարում,
4) մասնակցություն ուսումնական ստորաբաժանման ուսումնամեթոդական և հետազոտական աշխատանքներին:

4.4. Դասախոս՝
1) գործնական և լաբորատոր պարապմունքների, ուսումնական սեմինարների անցկացում,
2) ուսումնական պլանով նախատեսված առարկաների դասավանդում,
3) մասնագիտական առարկաներից հաշվեգրաֆիկական, կուրսային աշխատանքների և նախագծերի, ինչպես նաև ուսումնական և մանկավարժական պրակտիկաների ղեկավարում:

5. Պրոֆեսորադասախոսական կազմի տարակարգերից բացի, ամբիոնի պաշտոնային դրույքների հաշվին, սահմանվում են նաև պրոֆեսորադասախոսական հետևյալ հատուկ տարակարգերը.
1) խորհրդատու պրոֆեսոր՝ ՀՀ կամ արտասահմանյան համալսարաններից, հետազոտական և գիտաարտադրական կազմակերպություններից (ձեռնարկություններից) հրավիրված և Համալսարանում մասնակի կամ լրիվ դրույքով համապատասխան տարակարգով ժամանակավորապես ձևակերպված մասնագետ, որի հիմնական խնդիրներն են՝ հատուկ դասընթացների և գիտամեթոդական սեմինարների անցկացումը, նոր կրթական ծրագրերի և տեխնոլոգիաների, ուսուցման մեթոդների և կառավարման միջոցների ներդրումը,
2) հրավիրված պրոֆեսոր (դոցենտ, ասիստենտ)՝ տվյալ կամ այլ համալսարանի, ինչպես նաև հետազոտական և գիտաարտադրական կազմակերպությունների (ձեռնարկությունների)՝ համապատասխան տարակարգով և մինչև 0.75 դրույքով ժամանակավորապես ձևակերպված մասնագետ, որը համալրում է պրոֆեսորադասախոսական կազմի թափուր հաստիքները:

6. Համալսարանի գիտխորհուրդը վաստակաշատ պրոֆեսորներին սահմանված կարգով կարող է շնորհել նաև պատվավոր պրոֆեսորի կոչում:

III. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ԱՆՑՈՒՄԸ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՏԱՐԱԿԱՐԳԵՐԻ ՊԱՇՏՈՆՆԵՐԻՆ

7. Սույն կանոնակարգի 3-րդ կետում նշված պրոֆեսորադասախոսական կազմի՝ տարակարգերի պաշտոններին անցման (նշանակման և առաջքաշման) որակական չափանիշներն են՝
1) որակավորումը, գիտական աստիճանը,
2) մանկավարժական աշխատանքի ստաժը, տարիքը,
3) ուսումնական, հետազոտական, մեթոդական-կազմակերպչական գործունեության արդյունքները,
4) ուսանողների կողմից դասախոսի աշխատանքի որակի գնահատականը:

7.1. Պրոֆեսորի պաշտոնի կարող են հավակնել.
1) թափուր տեղերի տեղակալման կարգով՝ պրոֆեսորի գիտական կոչում ունեցող անձինք, որոնք, որպես կանոն, ունեն գիտությունների դոկտորի գիտական աստիճան,
2) առաջքաշման կարգով՝ դոցենտի գիտական կոչում ունեցող անձինք, որոնք ունեն գիտությունների դոկտորի գիտական աստիճան և իրականացնում են պրոֆեսորի պաշտոնին համապատասխանող գիտամանկավարժական գործունեություն: Անցումն իրականացվում է ինն տարվա գիտամանկավարժական աշխատանքի ստաժի առկայության դեպքում, որից ոչ պակաս, քան հինգ տարին՝ դոցենտի տարակարգում:

7.2. Դոցենտի պաշտոնի կարող են հավակնել.
1) թափուր տեղերի տեղակալման կարգով՝ դոցենտի գիտական կոչում ունեցող և համապատասխան պաշտոն զբաղեցնող անձինք,
2) առաջքաշման կարգով՝ դասախոսի և ասիստենտի պաշտոն զբաղեցնող անձինք, որոնք գիտությունների թեկնածու են, և որոնց գիտամանկավարժական գործունեությունը համապատասխանում է դոցենտի տարակարգին ներկայացվող չափանիշներին: Անցումն իրականացվում է ոչ պակաս, քան չորս տարվա գիտամանկավարժական աշխատանքի ստաժի առկայության դեպքում:

7.3. Ասիստենտի պաշտոնի կարող են հավակնել.

1) թափուր տեղերի տեղակալման կարգով՝ ասիստենտի պաշտոն զբաղեցնող անձինք, որոնք գիտությունների թեկնածու են,
2) առաջքաշման կարգով՝ ուսումնական ասիստենտի կամ դասախոսի պաշտոն զբաղեցնող անձինք, որոնք ավարտել են ասպիրանտուրան:

7.4. Դասախոսի պաշտոնի կարող են հավակնել.

1) թափուր տեղերի տեղակալման կարգով՝ անձինք, որոնք ունեն մագիստրոսին համարժեք որակավորում, սակայն չունեն գիտական աստիճան բացառությամբ ,ֆիզկուլտուրաե և ,բուժպատրաստությունե մասնագիտությունների,
2) առաջքաշման կարգով՝ ուսումնական ասիստենտի պաշտոն զբաղեցնող անձինք:

8. Արվեստի, կուլտուրայի, սպորտի (ֆիզիկական կուլտուրայի) ամբիոններում պրոֆեսորի, դոցենտի և ասիստենտի պաշտոններ զբաղեցնելու համար մյուս բոլոր չափանիշներին համապատասխանելու դեպքում, գիտական աստիճանի առկայությունը պարտադիր պայման չէ: Առաջնայինը հավակնորդի ստեղծագործական ավանդն է արվեստի, կուլտուրայի, սպորտի տվյալ ճյուղի զարգացման գործում, նրա ստեղծագործական գործունեության լայն ճանաչումը հանրապետությունում և նրա սահմաններից դուրս:

9. Բացառիկ դեպքերում անցումը պրոֆեսորադասախոսական կազմի տարակարգերի պաշտոններին կարող է կատարվել հետևյալ կերպ՝

1) Պրոֆեսորի պաշտոնի կարող են անցնել՝

ա) Համալսարանում երկարամյա (քսանհինգ և ավելի տարիներ) արդյունավետ ուսումնագիտական գործունեություն իրականացրած անձինք, ինչպես նաև համատեղության կարգով աշխատած և Համալսարան հիմնական աշխատանքի հրավիրվող առաջատար մասնագետները, որոնք ունեն թեկնածուի գիտական աստիճան և դոցենտի գիտական կոչում, և որոնց գիտամանկավարժական գործունեությունը համապատասխանում է պրոֆեսորին ներկայացվող որակական չափանիշներին,

բ) անկախ մանկավարժական ստաժի առկայությունից՝ Համալսարան հիմնական աշխատանքի հրավիրվող առաջատար մասնագետները, որոնք ունեն դոկտորի գիտական աստիճան և դոցենտի գիտական կոչում, և որոնց գիտամանկավարժական գործունեությունը համապատասխանում է պրոֆեսորին ներկայացվող որակական չափանիշներին:

2) Դոցենտի պաշտոնի կարող են անցնել՝

ա) Համալսարանում երկարամյա (տասնհինգ և ավելի տարիներ) արդյունավետ ուսումնագիտական գործունեություն իրականացրած դասախոսները, որոնք չունեն գիտական աստիճան և դոցենտի գիտական կոչում, բայց որոնց գիտամանկավարժական գործունեությունը համապատասխանում է դոցենտին ներկայացվող որակական չափանիշներին,

բ) առանց մանկավարժական ստաժի սահմանափակման՝ Համալսարան հիմնական աշխատանքի հրավիրվող առաջատար մասնագետները, որոնք ունեն գիտական աստիճան և որոնց գիտամանկավարժական գործունեությունը համապատասխանում է դոցենտին ներկայացվող որակական չափանիշներին:

10. Պրոֆեսորադասախոսական տարակարգեր զբաղեցնելու առավելագույն տարիքը սահմանվում է ՀՀ օրենսդրությամբ:

11. Համալսարանում վարչական պաշտոններ զբաղեցնող և գիտական կոչում (աստիճան) ունեցող անձինք համատեղության կարգով կարող են մինչև 0.5 դրույքով աշխատել պրոֆեսորադասախոսական տարակարգի պաշտոնում և նույն դրույքի սահմաններում մասնակցել պրոֆեսորադասախոսական պաշտոնների տեղակալման գործընթացին՝ բացառությամբ գիտական գծով պրոռեկտորի, որը համատեղության կարգով կարող է պահպանել մինչև 1 դրույք:

IV. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ՏԱՐԱԿԱՐԳԵՐԻ ԶԲԱՂԵՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

12. Պրոֆեսորադասախոսական տարակարգերի պաշտոնների զբաղեցման համար մրցույթում (այսուհետ՝ մրցույթ) հաղթած անձի հետ կնքվում է պայմանագիր մինչև հինգ տարի ժամկետով: Մրցույթի վերաբերյալ հայտարարությունը հրապարակվում է մրցույթից առնվազն վաթսուն օր

առաջ: Հայտարարության մեջ նշվում են մրցույթի պայմանները, համապատասխան տարակարգի հավակնորդին ներկայացվող պահանջները, ինչպես նաև դիմումների ներկայացման վերջնաժամկետը:

13. Պրոֆեսորների, ինչպես նաև համահամալսարանական ամբիոնների պրոֆեսորա-դասախոսական տարակարգերի մրցույթն անցկացվում է Համալսարանի գիտխորհրդում, իսկ դոցենտների, ասիստենտների և դասախոսների մրցույթը՝ ֆակուլտետների խորհուրդներում (այսուհետ՝ խորհուրդ):

14. Մրցույթին մասնակցել ցանկացողները հայտարարության հրապարակումից հետո երեսուն օրվա ընթացքում Համալսարանի կադրերի բաժին են ներկայացնում դիմում՝ ռեկտորի անունով՝ կցելով հետևյալ փաստաթղթերը.
   1) կադրերի հաշվառման անձնական թերթիկ,
   2) քաղվածք աշխատանքային գրքույկից,
   3) համառոտ ինքնակենսագրություն՝ ժամանակագրական կարգով,
   4) բնութագիր վերջին աշխատավայրից,
   5) բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը,
   6) գիտական աստիճանը և գիտական կոչումը հաստատող փաստաթղթերի պատճենները (առկայության դեպքում),
   7) տպագրված գիտական և մեթոդական աշխատանքների ցուցակը,
   8) տվյալներ պարգևների, մրցանակների և պատվավոր կոչումների վերաբերյալ:

15. Դիմումների ընդունման մասին կատարվում է համապատասխան գրառում դիմումների ընդունման մատյանում: Սույն կանոնակարգի 14-րդ կետով նախատեսված պահանջները չպահպանելու, ինչպես նաև դիմումների ընդունման վերջնաժամկետը լրացած լինելու դեպքում դիմումի ընդունումը մերժվում է, որի մասին ևս մատյանում կատարվում է համապատասխան գրառում:

16. Համալսարանի կադրերի բաժինը մրցույթի անցկացումից ոչ ուշ, քան քսան օր առաջ մրցույթին ներկայացված փաստաթղթերը և թեկնածուի որակական ցուցանիշները ամբիոնի նիստում քննարկելու և խորհրդի մրցութային հանձնաժողովին եզրակացություն ներկայացնելու նպատակով տրամադրում է համապատասխան ամբիոնին:

   Նիստի անցկացումից ոչ ուշ, քան տասն օր առաջ թեկնածուների ցուցակը հրապարակվում է Համալսարանում:

17. Խորհրդի նիստում նախագահողը, ըստ ազգանունների այբբենական կարգի, ներկայացնում է թեկնածուների ցուցակը: Յուրաքանչյուր թեկնածուի համար հրապարակվում է ամբիոնի եզրակացությունը, ինչպես նաև խորհրդի մրցութային հանձնաժողովի որոշումը: Թեկնածուները կարող են մասնակցել նիստին և հանդես գալ ելույթներով: Ելույթներն ընթանում են՝ ըստ թեկնածուների ազգանունների այբբենական կարգի: Թեկնածուների ելույթի համար հատկացվող ժամանակի վերաբերյալ Խորհուրդը ընդունում է որոշում: Թեկնածուն կարող է ինքնաբացարկ հայտնել մինչև խորհրդի կողմից քվեարկության անցկացումը:

18. Քվեարկության անցկացման և արդյունքների ամփոփման համար խորհուրդը բաց քվեարկությամբ իր կազմից ձևավորում է առնվազն երեք հոգուց բաղկացած հաշվիչ հանձնաժողով: Թեկնածուները չեն կարող առաջադրել և առաջադրվել հաշվիչ հանձնաժողովի կազմում: Հաշվիչ հանձնաժողովն իր կազմից ընտրում է նախագահ: Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

19. Խորհրդի յուրաքանչյուր անդամ հաշվիչ հանձնաժողովից ստանում է մեկ քվեաթերթիկ և ստորագրում Խորհրդի անդամացուցակում: Անցկացվող մրցույթի քվեաթերթիկում՝
   1) Մեկ թեկնածու առաջադրված լինելու դեպքում քվեաթերթիկում պետք է լինեն ‚կողմե և ‚դեմե բառերը (Հավելված 1),
   2) Մեկից ավելի թեկնածություններ առաջադրված լինելու դեպքում քվեաթերթիկում այբբենական կարգով նշվում են յուրաքանչյուր թեկնածուի ազգանունը, անունը և վերջին տողում <<բոլորին դեմ եմ>> բառերը (Հավելված 2): Այս դեպքում քվեարկողը կարող է նշում կատարել մեկ կամ մի քանի թեկնածուների օգտին կամ նշում կատարել <<բոլորին դեմ եմ>> վանդակում:

20. Հաշվիչ հանձնաժողովը կայացնում է քվեաթերթիկն անվավեր ճանաչելու մասին որոշում հետևյալ դեպքերում՝
   1) բաց թողնված կամ նշված են թե՛ <<կողմ>> և թե՛ <<դեմ>> բառերը (մեկ թեկնածուի առկայության դեպքում),
   2) կատարված են սույն կարգով չնախատեսված նշումներ, ընդգծումներ և այլ նշագծումներ:
21. Մրցույթն անց է կացվում փակ, գաղտնի քվեարկությամբ: Խորհրդի քարտուղարը Խորհրդի անդամներին ներկայացնում է փակ (գաղտնի) քվեարկության կարգը: Մրցույթն անցկացնելիս Խորհրդի նիստը համարվում է իրավազոր, եթե նիստին մասնակցել են Խորհրդի հաստատված կազմի 2/3-ը:
22. Քվեարկությունն ավարտվելուց հետո հաշվիչ հանձնաժողովն ամփոփում է քվեարկության արդյունքները և կազմում արձանագրություն (Հավելված 3): Մեկից ավելի թեկնածություններ առաջադրված լինելու դեպքում արձանագրության մեջ թեկնածուների ցուցակը տրվում է՝ ըստ հավաքած ձայների քանակի նվազման հաջորդականության: Հաշվիչ հանձնաժողովի նախագահը հրապարակում է արձանագրությունը, որից հետո հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը հաստատվում է Խորհրդի կողմից բաց քվեարկությամբ:
23. Մրցույթով անցած է համարվում այն թեկնածուն, որը հավաքել է խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությունը: Մեկից ավելի թեկնածուների կողմից մրցույթը հաղթահարելու դեպքում Համալսարանի ռեկտորին իրավունք է վերապահվում իր հայեցողությամբ պայմանագիր կնքել նրանցից մեկի հետ:
24. Սույն կանոնակարգի 21-րդ և 23-րդ կետով սահմանված կարգով որևէ թեկնածուի կողմից համապատասխան քանակի ձայներ չստանալու դեպքում նշանակվում է նոր մրցույթ:
25. Մրցույթի արդյունքները հաստատվում են Խորհրդի նիստում՝ բաց քվեարկությամբ: Խորհրդի նիստում ընդունված որոշման հետ Համալսարանի ռեկտորի հիմնավորված անհամաձայնության դեպքում (գրավոր ներկայացվում է Խորհրդին) կազմակերպվում է նոր մրցույթ:

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ՏԱՐԱԿԱՐԳԵՐՈՒՄ ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ

26. Համալսարանի ռեկտորը Խորհրդի նիստում մրցույթի արդյունքում ընտրված անձին հրամանագրում է պրոֆեսորադասախոսական համապատասխան պաշտոնում և նրա հետ կնքում է աշխատանքային պայմանագիր՝ մինչև հինգ տարի ժամկետով:
27. Համալսարանի ռեկտորն իրավունք ունի մինչև համապատասխան ուսումնական տարվա ավարտը կամ մրցույթի անցկացումը սույն կանոնակարգի 7-ից 8-րդ կետերի պահանջները բավարարող անձանց ժամանակավորապես հրամանագրել ամբիոնի թափուր պրոֆեսորադասախոսական տարակարգում:
28. Պրոֆեսորադասախոսական հատուկ տարակարգեր զբաղեցնելու դեպքերում Համալսարանի ռեկտորը, քննարկման արդյունքով՝ առանց մրցույթ անցկացնելու, վերջիններիս հրամանագրում է համապատասխան տարակարգերում՝ նրանց հետ կնքելով աշխատանքային պայմանագիր՝ մինչև մեկ տարի ժամկետով:
29. Համալսարանի ռեկտորը, աշխատանքային պայմանագրի ժամկետը լրանալուց հետո աշխատանքային պարտականությունները պատշաճ կատարելու դեպքում հիմք ընդունելով համապատասխան ամբիոնի դրական կարծիքը, իրավունք ունի պրոֆեսորադասախոսական տարակարգում աշխատողի հետ կնքում է աշխատանքային պայմանագիր՝ մինչև հինգ տարի ժամկետով, առանց մրցութային ընտրության՝ պայմանագրային գործունեության արդյունքում նրա գիտամանկավարժական գործունեության արդյունքների գնահատման հիման վրա:
30. Պրոֆեսորադասախոսական կազմի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծվում է ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հավելված 1

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՔՎԵԱԹԵՐԹԻԿ

Համալսարանի գիտական/

_____ խորհրդի

(ֆակուլտետի խորհրդի դեպքում նշվում է ֆակուլտետի լրիվ անվանումը)

_____ նիստում (արձանագրություն թիվ _____)

տարեթիվ, ամսաթիվ

պրոֆեսորի(դոցենտի, ասիստենտի, դասախոսի) փակ (գաղտնի) քվեարկության

_____ ☐ Կողմ * ☐ Դեմ

(Թեկնածուի ազգանունը, անունը)

* Թեկնածությանը կողմ լինելու դեպքում նշվում է ,Կողմե բառը, իսկ դեմ լինելու դեպքում՝ ,Դեմե բառը՝ համապատասխան տողի վանդակում կատարելով ,√ե նշումը:

Հավելված 2

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՔՎԵԱԹԵՐԹԻԿ

Համալսարանի գիտական/
_____ խորհրդի
(ֆակուլտետի խորհրդի դեպքում նշվում է ֆակուլտետի լրիվ անվանումը)
_____ նիստում (արձանագրություն թիվ _____)
տարեթիվ, ամսաթիվ

_____ ամբիոնի պրոֆեսորի (դոցենտի, ասիստենտի, դասախոսի)
ամբիոնի անվանումը
փակ (գաղտնի) քվեարկության

1. ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ	
2. ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ	
3. ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ	
4. ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ	
5. ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ	
6. ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ	
7. ԲՈԼՈՐԻՆ ԴԵՄ ԵՄ	

* Որևէ թեկնածուին կողմ լինելու կամ բոլորին դեմ լինելու դեպքում քվեաթերթիկում համապատասխան տողի վանդակում կատարվում է ,√ե նշումը:

Հավելված 3

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՇՎԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Հաշվիչ հանձնաժողովը ընտրվել է Համալսարանի գիտական/
_____
(ֆակուլտետի խորհրդի դեպքում նշվում է ֆակուլտետի լրիվ անվանումը)

խորհրդի _____ նիստում (արձանագրություն թիվ _____)
տարեթիվ, ամսաթիվ

հետևյալ կազմով՝

1. _____
անուն, ազգանուն
2. _____
անուն, ազգանուն
3. _____
անուն, ազգանուն

Համալսարանի գիտական/ _____ խորհրդի
(ֆակուլտետի խորհրդի դեպքում նշվում է ֆակուլտետի լրիվ անվանումը)

_____ անդամներից ներկա էին _____ -ը:

Քվեարկվել է (են) _____ ամբիոնի պրոֆեսորի
(դոցենտի, ասիստենտի, դասախոսի) ամբիոնի անվանումը
պաշտոնի թեկնածությունը (ները):
Քվեարկությանը մասնակցել է Համալսարանի գիտական/
_____
(ֆակուլտետի խորհրդի դեպքում նշվում է ֆակուլտետի լրիվ անվանումը)
խորհրդի _____ անդամ:
Բաժանվել է _____ քվեաթերթիկ:
Քվեատուփում առկա է _____ քվեաթերթիկ:
Քվեարկության արդյունքներն են՝

Միակ Թեկնածուի դեպքում

ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆԸ, ԱՆՈՒՆԸ	ԿՈՂՄ	ԴԵՄ	ԱՆՎԱՎԵՐ

Մեկից ավելի թեկնածությունների դեպքում

ԹԵԿՆԱԾՈՒԻ ԱԶԳԱՆՈՒՆԸ, ԱՆՈՒՆԸ	ԿՈՂՄ	ԴԵՄ	ԱՆՎԱՎԵՐ

Անվավեր քվեաթերթիկների քանակը _____:

Փակ (գաղտնի) քվեարկության արդյունքով _____
անուն , ազգանուն
ընտրված է (չի ընտրված) _____ ամբիոնի պրոֆեսորի
(դոցենտի,ասիստենտի, ամբիոնի անվանումը
դասախոսի) պաշտոնում:

Կամ՝
Փակ (գաղտնի) քվեարկության արդյունքով _____
ամբիոնի անվանումը
ամբիոնի պրոֆեսորի (դոցենտի, ասիստենտի, դասախոսի) պաշտոնի թեկնածուներից ոչ մեկը չի ընտրվում տվյալ պաշտոնում:

Հաշվիչ հանձնաժողովի նախագահ՝ _____ _____
ստորագրություն անուն, ազգանուն

Հաշվիչ հանձնաժողովի անդամներ՝

1. _____ _____
ստորագրություն անուն, ազգանուն
2. _____ _____
ստորագրություն անուն, ազգանուն
3. _____ _____
ստորագրություն անուն, ազգանուն